ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
2013 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան……4

ԲԱԺԻՆ 1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

ԲԱԺԻՆ 2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները ……8

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……8

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները ……9

ԲԱԺԻՆ 3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները……11

3.1. Գազափոխադրման համակարգ……11

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ……11

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում……14

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ……17

3.2. Գազաբաշխման համակարգ……21

3.2.1. Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում……21

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում……23

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ……26

ԲԱԺԻՆ 4. Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները……36

ԲԱԺԻՆ 5. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……37

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը……37

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա
ներդրումների ծավալը……38

Եզրակացություններ……40

Հղումներ օգտագործված նյութերին……42

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2014 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2013-2015 թվականների ներդրումային ծրագրի 2013 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013-2015 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Որոշում 3]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն, Տեղեկատվություն 1, Տեղեկատվություն 2]**: Հաշվի է առնվել նաև Ընկերության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի 01-21/3807 գրությամբ ներկայացված պարզաբանումները:

ԲԱԺԻՆ 1.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել դրանց վերակառուցման, վերազինման, արդիականացման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով: Այդ համակարգերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվում էր նաև ներդրումներ իրականացնել մեքենաների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, չափիչ սարքերի ու գործիքների ձեռքբերման, ինչպես նաև ընկերության արտադրական և վարչական շենքերի վերականգնման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2013 թվականի ընթացքում իրականացնել 7 706,4[1] մլն դրամի ներդրումներ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2013 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

ԳՐԱՖԻԿ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների 12,4%-ը նախատեսվում էր ներդնել Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման, վերականգնման, վերակառուցման և արդիականացման նպատակով, որի 47,3%-ը նախատեսվում էր ներդնել նոր գազահորի կառուցման աշխատանքներն ավարտելու և այն շահագործման հանձնելու նպատակով (N24 գազահոր): Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդրումներ իրականացնել նաև 2 նոր գազահորերի կառուցման և 2 շահագործվող

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

գազահորերի ընդլայնման և արդիականացման, ճնշակայանի սարքերի և սարքավորումների փոխարինման նպատակով և այլն:

Ներդրումային ծրագրի հաջորդ ուղղությամբ՝ ներդրումների ընդհանուր ծավալի 19,9%-ը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգի վերակառուցմանն նպատակով, որի մոտ 55%-ը նախատեսվում էր ուղղել վնասված մայրուղային գազատարերի վերականգնման, վերատեղադրման և փոխարինման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև վերակառուցել և արդիականացնել գազաբաշխիչ կայանները և այլ ինժեներական ենթակառուցվածքները, վերականգնել գազաբաշխիչ կայանների էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը, կառուցել էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ և այլն:

Ներդրումային ծրագրի 5,1%-ը նախատեսվում էր ներդնել գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով, որի 75,6%-ը նախատեսվում էր ներդնել մեքենա-մեխանիզմների ձեռքբերման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ձեռք բերել տարբեր սարքեր և գործիքներ, գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների օպերատորների համար կառուցել աշխատասենյակներ, ընդլայնել և արդիականացնել կապի համակարգը և այլն:

Ներդրումների 5,7%-ը նախատեսվում էր ուղղել 11 500 նոր բաժանորդների միացման և նրանց մոտ գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի տեղադրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր կառուցել նաև 5 կմ երկարությամբ նոր գազատարեր:

Ներդրումային ծրագրի հաջորդ ուղղությամբ՝ ընդհանուր ներդրումների 23,3%-ը նախատեսված էր ուղղել գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով, որի մոտ 83,2%-ը նախատեսվում էր ներդնել գազաբաշխման համակարգի վնասված գազատարերի վերականգնման, փոխարինման և վերատեղադրման նպատակով: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև կառուցել էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ, վերականգնել ընկերության էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ և այլն:

Ներդրումների ընդհանուր ծավալի 8,8%-ը նախատեսվում էր ներդնել 31 000 գազասպառողների մոտ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների տեղադրման նպատակով:

Ներդրումների 24,7%-ը նախատեսված էր գազաբաշխման համակարգի այլ ուղղություններով, որից 52,5%-ը նախատեսվում էր ներդնել գազաբաշխման համակարգի հաշվառման համակարգի արդիականացման նպատակով (այս ներդրումների շուրջ 58,5%-ը նախատեսվում էր ներդնել էլեկտրոնային ճշտիչներով համալրված նոր սերնդի գազահաշվիչների (իրենց ծախսաչափային հանգույցներով) ձեռքբերման և տեղադրման նպատակով): Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով ձեռք բերել համակարգչային և կազմակերպչական տեխնիկա, գրասենյակային գույք, մեքենա մեխանիզմներ, վերականգնել ընկերության արտադրական և վարչական շենքերը, ընդլայնել և արդիականացնել ընկերության կապի համակարգը, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ և այլն:

ԲԱԺԻՆ 2.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2013 թվականի ընթացքում կատարել է 4 488,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 4 150,8 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 337,6 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում: Բացի այդ, ընկերությունը իրականացված ներդրումների կազմում ներկայացրել է նաև 1 296,7 մլն դրամի ընթացիկ ծախսեր: Նշված ծախսերը հանդիսանում են սակագնի ծախսային տարրեր և ներդրումների մաս կազմել չեն կարող, ուստի ընկերության 2013 թվականի ներդրումային գործունեության արդյունքները վերլուծելիս այդ ծախսերը հաշվի չեն առնվել:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից 2013 թվականի ընթացքում փաստացի իրականացված՝ ավարտված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը		Ընդամենը կատարված (ավարտված) ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3	4	5	6	7
1	Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումներ	959,3	12,4%	795.9	19.2%	83.0%
2	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 532,4	19,9%	527.6	12.7%	34.4%
3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	395,4	5,1%	194.5	4.7%	49.2%
4	Գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	437,3	5,7%	685.7	16.5%	156.8%

Աղյուսակ 1
(շարունակություն)

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը		Ընդամենը կատարված (ավարտված) ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3	4	5	6	7
5	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 795,9	23,3%	592.9	14.3%	33.0%
6	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	2 586,2	33,6%	1 354.2	32.6%	52.4%
	Ընդամենը	**7 706,4**		**4 150.8**		**53.9%**

Աղյուսակ 1-ից երևում է, որ ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է միայն 53,9%-ով: Ներդրումային ծրագրի միայն մեկ ուղղությամբ՝ գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներն են ընկերության կողմից կատարվել նախատեսվածից 56,8%-ով ավել ծավալով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են 2013 թվականի ընթացքում կատարված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտա-լացման ենթակա ծախսեր, որից՝		Ավարտված աշխատանքների մասով	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից**	**1 604.6**	**35.8%**	**1 604.6**	**38.7%**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**633.8**	**14.1%**	**457.4**	**11.0%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**244.6**	**5.4%**	**244.6**	**5.9%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**2 005.3**	**44.7%**	**1 844.2**	**44.4%**
4,1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*206.7*		*150.3*	

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտա-լացման ենթակա ծախսեր, որից՝		Ավարտված աշխատանքների մասով	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
4,2	*նյութական ծախսումներ*	*1 301.9*		*1 199.0*	
4,3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*493.4*		*493.4*	
4,4	*այլ*	*3.3*		*1.6*	
5	**ԸՆԴԱՄԵՆԸ**	**4 488.4**	**100.0%**	**4 150.8**	**100.0%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, ներդրումները հիմնականում իրականացվել են ինչպես կողմնակի կազմակերպությունների միջոցով, այնպես էլ՝ սեփական ուժերով: Տեղակայում չպահանջող հիմնական միջոցները ներդրումների ծավալում ունեն անհամեմատ փոքր կշիռ:

Նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումների մեծ ծավալը (1 604,6 մլն դրամ) պայմանավորված է այն հանգամանքով, որ ընկերությունը 2013 թվականին շահագործման է հանձնել 1999-2011 թվականների ընթացքում իրականացված անավարտ հիմնական միջոցները: Հատկանշական է, որ նշված ծավալի մեջ ներառված են ներդրումներ, որոնց ուղղությամբ 2013 թվականին ներդրումներ ընդհանրապես չեն իրականացվել: Այս ծավալում մոտ 442,0 մլն դրամ ծավալով ներառված է նաև Աբովյանի գազապաստարանի N24 գազահորի կառուցման ուղղությամբ դեռևս 2009 թվականին սկսված աշխատանքների մասով ներդրումները, որոնք ավարտվել և շահագործման են հանձնվել 2013 թվականին:

ԲԱԺԻՆ 3.
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1. Գազափոխադրման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2013 թվականի ընթացքում գազափոխադրման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.1.1. Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով կատարված ներդրումներ

2013 թվականի ընթացքում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 959,3 մլն դրամ գումար՝ նոր գազահորերի կառուցման, շահագործվող հորերի վերականգնման և ընդլայնման, ճնշակայանի սարքավորումների վերականգնման և արդիականացման և այլ նպատակներով:

Փաստացի ներդրվել է 1 045,0 մլն դրամ, որի արդյունքում ավարտվել են 795,9 մլն դրամի աշխատանքներ: Մնացած 249,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղության ***«№24 գազահորի շինարարություն»*** ենթաուղղությամբ Աբովյանի գազապաստարանի նշված գազահորի շինարարության, բարեկարգման նպատակով նախատեսված 454,1 մլն դրամի ներդրումները իրականացվել և շահագործման են հանձնվել նախանշված ծավալով: Նշված գազահորի լուծազատման աշխատանքներում օգտագործվել է 320 հազ. մ^3 գազ՝ 30,8 մլն դրամ ընդհանուր արժեքով: Ծախսված 1 մ^3 գազի միջին արժեքը կազմում է 96,2 դրամ կամ 0,2 ԱՄՆ դոլլար: Նշված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 24,0 մլն դրամ է, որը հաշվարկվել է նշված գազի ծավալի համար Ռուսաստանի Դաշնությունից ներկրվող գազի գնի և փոխադրման համակարգի կորուստների հանրագումարով: Ուստի 6,7 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«№4 գազահորի ընդլայնում» ենթաուղղությամբ հերմետիկության և ամրության համալիր փորձարկումների անցկացման նպատակով նախատեսվում էր 15,0 մլն դրամի ներդրումներ իրականացնել: Իրականացվել է 74,0 մլն դրամի ներդրում, որից 61,9 մլն դրամի ներդրումներն շահանգործման են հանձնվել: Ավարտված աշխատանքներից 34,4 մլն դրամը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ բնույթով ընթացիկ ծախսեր են և չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրի տարր, իսկ 6,7 մլն դրամը գերազանցել է նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը:

«№11 գազահորի վերականգնում» ենթաուղղությամբ նախատեսվում 27,5 մլն դրամի աշխատանքները ևս իրականացվել և շահագործման են հանձնվել նախանշված ծավալով:

Այս ուղղությամբ ևս 2 գազահորերի (№25 և №23) կառուցման նպատակով իրականացվել են մոտ 215,3 մլն դրամի աշխատանքներ, որոնք մնացել են անավարտ:

Նշված ուղղության շրջանակներում ներկայացվել են նաև №№8,10,12,16 գազահորերի վերականգնման և արդիականացման ուղղությամբ 202,2 մլն դրամի աշխատանքներ, որոնք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

«Գազի շլեյֆերի վերակառուցում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 10,0 մլն դրամ գազի շլեյֆի մեկուսիչ շերտի փոփոխման նպատակով:

Փաստացի իրականացվել են 10,0 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ենթաուղղության «Աբովյանի ԳՍՊԿ N2 շլեյֆի մեկուսիչ ծածկույթի փոխարինում» աշխատանքի սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 0,8 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

---

[2]Սկզբնական փաստաթղթերի (կատարողական և շահագործման փաստագրման ակտեր, հաշիվ ապրանքագրեր և այլն) ուսումնասիրության արդյունքում նվազեցվել են մի շարք աշխատանքների, հումք-նյութերի և սարքավորումների, ինչպես նաև դրանց վրա կիրառված որոշ նախահաշվային տոկոսների արժեքները:

«ԳՍՊԿ-ի հորերին մոտեցող ճանապարհների վերականգնում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 12,8 մլն դրամ Աբովյանի ԳՍՊԿ-ի մի շարք հորերին մոտեցող ճանապարհների վերականգնման նպատակով:

Փաստացի իրականացվել են 12,8 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են: Նշված աշխատանքի սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 2,1 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Աբովյանի ԳՍՊԿ-ի N6 գազահորի և օպերատորի շենքի մոտ աղաջրի չափիչ հանգույցի կառուցում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 1,2 մլն դրամ Աբովյանի ԳՍՊԿ-ի N6 գազահորի մոտ աղաջրի չափիչ հանգույցի կառուցման նպատակով:

Փաստացի իրականացվել են 1,2 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Նշված ներդրումը (1,2 մլն) ենթակա է նվազեցման՝ աշխատանքների կատարումը հիմնավորող սկզբնական փաստաթղթերերի բացակայության պատճառով:

«Աբովյանի ԳՍՊԿ-ի կաթսայատնից մինչև ԳԲԿ ջերմագծի կառուցում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 0,8 մլն դրամ Աբովյանի ԳՍՊԿ-ի կաթսայատնից մինչև գազաբաշխիչ կայան ջերմագծի կառուցման նպատակով:

Փաստացի իրականացվել են 0,8 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Նշված ներդրումը (0,8 մլն) ենթակա է նվազեցման՝ աշխատանքների կատարումը հիմնավորող սկզբնական փաստաթղթերերի բացակայության պատճառով:

«***Աբովյանի ԳՍՊԿ-ի վթարային պաշտպանության համակարգի ավտոմատացման սպուգիչ սարքի ձեռքբերում և տեղադրում***» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 10,0 մլն դրամ: Իրականացվել են 10,0 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով շահագործման են հանձնվել:

«Ճնշակային արտադրամասի և տարածքի վերականգնման աշխատանքներ» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 16,3 մլն դրամ Աբովյանի ԳՍՊԿ-ի կենցաղային շենքերի, դրանց տանիքների, սառը ջրի մատակարարման համակարգի հիմնանորոգման, ինչպես նաև էլեկտրա-տնտեսության վերականգնման և վերազինման նպատակով:

Փաստացի իրականացվել են 18,7 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում 15,3 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 3,4 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Այս ենթաուղղության «Կոմպրեսորային արտադրամասի շենք N2 /ԳՍՊԿ/ (տանիքի վերանորոգում)» և «Աբովյանի ԳՍՊԿՄ N2 արտադրամաս ջրի սառը ցիկլի մատուցում» աշխատանքների սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում համապատասխանաբար 0,2-ական մլն դրամ[2] և նախապես չհամաձայնեցված՝ 0,6 մլն դրամ, ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Աղյուսակ 3
մլն դրամ

h/h	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում	-	-	6.75	6.75
2	Աբովյանի ԳՍՊԿ-ի վերականգնում, վերակառուցում և արդիականացում	237.3	6.7	5.3	249.3
4	**Ընդամենը**	**237.3**	**6.7**	**12.1**	**256.0**

Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 795,9 մլն դրամի ներդրումներից 256,0 մլն դրամ ենթակա է նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում պետք է ներառվի է 539,9 մլն դրամը:

3.1.2. Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 1 532,4 մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազատարերի վերականգնման և վերակառուցման, ԳԲԿ-ներում տեխնոլոգիական սարքավորումների և չափիչ գծերի փոխարինման, չափիչ հանգույցների վերակառուցման, ԳԲԿ-ների և ՉՀ-ների էլեկտրամատակարարման համակարգի վերականգնման, էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների կառուցման նպատակով և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր նաև ներդրումներ կատարել նաև Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և գազաբաշխիչ կայանի կառուցման ուղղությամբ:

2013 թվականի ընթացքում ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է 539,0 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են 527,6 մլն դրամի աշխատանքներ: Մնացած 11,4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

«Մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 841,7 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 396,5 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 395,8 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են: Մնացած՝ 0,7 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Այս ուղղության ***«Երևանի շուրջ օղակաձև Dպ1200 գազատարի վերականգնում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 0,7 մլն դրամ: Փաստացի կատարվել են 0,7 մլն դրամի աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Նշված ուղղությամբ 395,0 մլն դրամ ծավալով ներկայացվել է «Գորիս-Նախիջևան D500Մ/Գ-ի վերակառուցում» աշխատանքը, որը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

Նշված ուղղության մնացած ենթաուղղություններով ներդրումներ չեն կատարվել:

«Գազաբաշխիչ կայանների և այլ ինժեներական ենթակառուցվածքների շինարարություն, վերակառուցում և արդիականացում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր իրականացնել 277,3 մլն դրամի ներդրումներ:

Փաստացի ներդրվել է 128,1 մլն դրամ, որի արդյունքում 123,1 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են: Մնացած՝ 5,0 մլն դրամի ներդրումները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն չեն շահագործվում:

Նշված ուղղության ***«Տեխնոլոգիական սարքավորումների և չափիչ գծերի փոխարինում ԳԲԿ-ում (ֆիլտրեր, ճնշման կարգավորիչներ, փականներ)»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 94,5 մլն դրամ՝ 26 ԳԲԿ-ներում սարքավորումների փոխարինման նպատակով:

Փաստացի իրականացվել են 17,8 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 17,2 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 0,6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Նշված ենթաուղղության «Կապան ԳԲԿ չափիչ հանգույցի չափիչ գծերի վերակառուցում» աշխատանքից 9,1 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում

«***Հրազդան 5-րդ էներգաբլոկի չափիչ հանգույցում զտիչների (փոշեխոնավա-անջատիչների) տեղադրում***» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 105,8 մլն դրամ: Իրականացվել են 110,3 մլն դրամի ներդրումներ, որից 105,8 մլն դրամի ներդրումները շահագործման են հանձնվել:

Նշված ուղղության մնացած ենթաուղղություններով ներդրումներ չեն կատարվել կամ կատարվել են, սակայն մնացել են անավարտ:

«Գազաբաշխիչ կայանների էլեկտրամատակարարման և ջերմամատակարարման համակարգի վերականգնում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 12,0 մլն դրամ՝ 45 հատ գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների էներգամատակարարման համակարգերի վերականգնման ուղղությամբ:

Փաստացի իրականացվել են 4,7 մլն դրամի 23 հատ գազաբաշխիչ կայանների և չափիչ հանգույցների հողանցման կոնտուրների վերականգնման աշխատանքներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

«ԷՔՊ կայանների տեղակայում և արդիականացում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 153,4 մլն դրամ 20 հատ կաթոդային կայանների կառուցման (139,9 մլն դրամ) և 100 հատ հսկիչ-չափիչ կետերի ձեռքբերման և տեղադրման նպատակով (13,5 մլն դրամ):

2013 թվականին այս ուղղությամբ ներդրումներ են իրականացվել միայն ***«ԷՔՊ կաթոդային կայանների կառուցում»*** ենթաուղղությամբ, որտեղ նախատեսվում էր ներդնել 139,9 մլն դրամ 20 հատ կայանների կառուցման նպատակով:

Փաստացի կատարվել է 7,1 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 1,5 դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 5,6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Նշված 1,5 մլն դրամը ներդրվել է «Ղազախ-Երևան II գիծ ՄԳ Ակունք կմ 150 ԳԷՔՊ կայանի վերակառուցում» և «Ղազախ-Երևան II գիծ ՄԳ Կապուտան կմ 146 ԳԷՔՊ կայանի վերակառուցում» աշխատանքների կատարման ուղղությամբ, որոնք նախապես համաձայնեցված չեն եղել, ուստի ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթա ներդրումների ծավալից:

«Հողամասերի ձեռքբերում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 2,6 մլն դրամ: Փաստացի 2,6 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել Տավուշի մ. Աչաջուր համայնքի 2,2 հա և Արարատի մ. Խաչփար գյուղի 1,4 հա հողամասեր:

Ստորև՝ աղյուսակ 3-ում, ներկայացված է գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությունից նվազեցման ենթակա ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 4
մլն դրամ

h/h	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Մայրուղային գազատարերի վերականգնում, վերատեղադրում և փոխարինում	395,0	-	395,0
2	Գազաբաշխիչ կայանների և այլ ինժեներական ենթակառուցվածքների շինարարություն, վերակառուցում և արդիականացում	-	9,1	9,1
3	ԷՔՊ կայանների տեղակայում և արդիականացում	1,5	-	1,5
4	**Ընդամենը**	**396,5**	**9,1**	**405,6**

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 421,8 մլն դրամի ներդրումներից 405,6 մլն դրամ ենթակա է նվազեցման է և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում պետք է ներառվի է 16,1 մլն դրամը:

3.1.3. Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգեր՝ իրենց լրակազմող արտադրական մասերով, չափագիտական թվային գործիքներ, ջերմաստիճանի և ճնշման տվիչների կարգաբերիչներ՝ իրենց օժանդակ սարքավորումներով, տարբեր մեքենա-մեխանիզմներ, ԳԲԿ-ներում և ՉՀ-ներում օպերատորների համար կառուցել աշխատասենյակներ, ինչպես նաև՝ իրականացնել միջոցառումներ գազա-փոխադրման համակարգի կապի բարելավման ուղղությամբ ("Կողբ" չափիչ հանգույցի օպտիկա-մանրաթելային գծի անցկացում) և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 395,4 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 194,5 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

«Հաշվառման համակարգի արդիականացում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 30,7 մլն դրամ՝ միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի (իրենց լրակազմող արտադրամասերով), չափագիտական սարքերի և արագահան տափօղակային հանգույցների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

Փաստացի ներդրվել է 8,3 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Նշված ուղղության ***«Միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի ձեռքբերում և տեղադրում»*** ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 8,3 մլն դրամ 5 հատ միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգի ձեռքբերման և տեղադրման ուղղությամբ:

Փաստացի 8,1 մլն դրամի ներկայացվել են միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի և 0,2 մլն դրամի դրանց օժանդակ սարքերի ձեռքբերման ուղղությամբ ներդրումներ, որն իրականացվել է նախորդ ժամանակաշրջանում: Ընկերության նախորդ ժամանակաշրջանի հաշվետվության մեջ նշված ուղղությամբ ձեռքբերումներ չեն ներկայացվել, իսկ 2011 թվականին ձեռք

բերված 19 հատ միկրոպրոցեսորային ծախսաչափերն իրենց հանգույցներով (համաձայնեցված էր 2011 թվականի ներդրումային ծրագրով), ամբողջությամբ հանձնվել էին շահագործման: Ուստի, ընթացիկ հաշվետվության մեջ նշված գումարի (8,3 մլն դրամ) գոյացման աղբյուրը որպես «նախորդ ժամանակաշրջանից» նշելը անհասկանալի է և նշված ծավալները ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Նշված ուղղության մնացած ենթաուղղություններով ներդրումներ չեն կատարվել:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր 299,2 մլն դրամի ձեռք բերել տարբեր մեքենա-մեխանիզմներ:

Փաստացի՝ ***«Մեխանիզմների ձեռքբերում»*** ենթաուղղությամբ 3,2 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել 1990 թվականի Բուլդոզեր ԴԶ-171 2281 մակնիշի բեռնատար ավտոմեքենա: Համաձայն ընկերության ներկայացված տեղեկատվության և սկզբնական փաստաթղթերի՝ նշված մեքենան հավատարմագրային կառավարման է հանձնված այլ ընկերության և չի մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, ուստի և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Նշված ուղղության մնացած ենթաուղղություններով ներդրումներ չեն կատարվել:

«Շենքերի և շինությունների կառուցում, վերակառուցում և վերականգնում» ուղղությամբ ընկերության գազաբաշխիչ կայաններում և չափիչ հանգույցներում օպերատորների համար 10,0 մլն դրամ ծավալով նախատեսվում էր կառուցել 5 հատ աշխատասենյակներ:

Այս ուղղությամբ 10,0 մլն դրամ ծավալով ներկայացվել է ընկերության բնական գազի ներկրման լիցենզիայի տուրքի վճարը, որը չի կարող համարվել ներդրումային ծրագրի տարր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Կապի համակարգի արդիականացում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 5,4 մլն դրամ "Կողք" չափիչ հանգույցի մոտ 6կմ երկարությամբ օպտիկա-մանրաթելային գծի անցկացման նպատակով:

Փաստացի ներկայացվել են 172,9 մլն դրամի Սիսիան-Տեղ ԳԲԿ օպտիկա-մանրաթելային գծի անցկացման (158,0 մլն) և տարբեր սարքավորումների ձեռքբերման (14,9 մլն) ուղղությամբ իրականացված ներդրումներ, որոնք կատարվել են նախորդ ժամանակաշրջանում:

Համաձայն ընկերության ներկայացված սկզբնական փաստաթղթերի՝ նշված սարքավորումները և գծերը հավատարմագրային կառավարման են հանձնված այլ ընկերության և չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, ուստի և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Ստորև՝ աղյուսակ 4-ում, ներկայացված է գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 5
մլն դրամ

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Հաշվառման համակարգի արդիականացում	8,3	-	8,3
2	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	-	3,2	3,2
3	Շենքերի և շինությունների կառուցում, վերակառուցում և վերականգնում	10,0	-	10,0
4	Կապի համակարգի արդիականացում	-	173,0	173,0
	Ընդամենը	**18,3**	**176,2**	**194,5**

«Գազափոխադրման համակարգի այլ ուղղություններով ներդրումներ» ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 194,5 մլն դրամի ներդրումներն ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներդրումներ չպետք է ներառվեն:

3.2. Գազաբաշխման համակարգ

Ստորև, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2013 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում իրականացված ներդրումների ծավալները:

3.2.1. Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում

Այս նպատակով 2013 թվականին նախատեսվում էր իրականացնել 437,3 մլն դրամի ներդրումներ գազաբաշխման ցանցի ընդլայնման և նոր բաժանորդների միացման նպատակով: Նախատեսվում էր գազաբաշխման ցանցին միացնել 11 500 նոր բաժանորդներ և կառուցել 5 կմ գազատար:

Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է 696,5 մլն դրամ, որի արդյունքում 685,7 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 10,8 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

«Գազի կենցաղային հաշվիչների և արկղերի ձեռքբերում և տեղադրում» ուղղությամբ 362,3 մլն դրամ ծավալով նախատեսվում էր ձեռքբերել և տեղադրել 11 500 գազահաշվիչներ (իրենց արկղերով):

Փաստացի ներդրվել է 608,7 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալի աշխատանքներ ավարտվել են:

2013 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել 11 944[3] նոր բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 650 495 **[Տեղեկատվություն 3]**:

Նշված աշխատանքներից 160,5 մլն դրամ ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Գազաբաշխման ցանցի ընդլայնում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 75,0 մլն դրամ՝ 5կմ գազաբաշխման ցանցի կառուցման նպատակով:

---

[3] 2013 թվականի ընթացքում միացված բաժանորդների քանակի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ընդհանուր բաժանորդների քանակի մասին տեղեկատվությունը ստացվել է ընկերության պաշտոնական ոստ-կայքից:

Փաստացի ներդրվել է 87,8 մլն դրամ, որի արդյունքում ավարտվել են 77,0 մլն դրամի աշխատանքներ և 10,8 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Ավարտված ներդրումների ծավալից 9,3 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Բացի վերը նշվածը՝ այս ուղղությամբ 12,1 մլն դրամ ծավալով ներկայացվել են նախորդ ժամանակաշրջանից (1999-2011 թվականներ) եկած նախագծային աշխատանքներ, որոնք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ այդ նախագծերին համապատասխան աշխատանքների ավարտը և դրանց արդյունքում ձևավորված հիմնական միջոցները շահագործման հանձնելու փաստը հիմնավորող համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով:

Ստորև՝ աղյուսակ 5-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 6

մլն դրամ

h/h	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայ-նեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնա-սիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում	160,5	-	160,5
2	Գազաբաշխման ցանցի ընդլայնում	-	21,4	21,4
	Ընդամենը	**160,5**	**21,4**	**181,9**

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 685,7 մլն դրամի ներդրումներից 181,9 մլն դրամ ենթակա է նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում պետք է ներառվի 503,8 մլն դրամը:

3.2.2. Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր ներդնել 1 795,9 մլն դրամ՝ գազատարերի վերականգնման և վերատեղադրման, էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների կառուցման և արդիականացման, էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերա-կանգնման և արդիականացման և այլ աշխատանքների ուղղությամբ:

Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդրումներ կատարել նաև Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով գազատարերի վերատեղադրման և կառուցման ուղղությամբ:

Փաստացի ներդրվել է 655,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 592,9 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 62,5 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

«Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերատե-ղադրում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 1 494,8 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 642,5 մլն դրամ, որի արդյունքում 582,4 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 60,1 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Ավարտված ներդրումների ծավալում, 2,2 մլն դրամի ներկայացվել են վթարա-վերականգնման, 28,4 մլն դրամի գազի չափիչ կայանների և գազի կարգավորման կայանների կարգավորիչների ու GSA հանգույցների տեղադրման և 4,1 մլն դրամի երկու խողովակով (ԲԱ-200/2 (диспенсер)) բաշխիչ աշտարակի ձեռք բերման աշխատանքներ, որոնք ևս ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

Բացի վերը նշվածը՝ 182,2 մլն դրամ ծավալով ներկայացվել են նախորդ ժամանակաշրջանից եկած անավարտ աշխատանքներ և նախագծային աշխատանքներ, որոնք շահագործման են հանձնվել 2013 թվականին: Այս ներդրումներն ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նշված աշխատանքների ավարտը և շահագործման հանձնվելու փաստը հաստատող համապատասխան հիմնավորող փաստաթղթերի բացակայության պատճառով:

Բացի այդ, այս ուղղությունից 31,0 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

«ԷՔՊ կայանների կառուցում և արդիականացում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 166,2 մլն դրամ՝ էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների կառուցման և հսկիչ-չափիչ կետերի տեղադրման նպատակով:

Փաստացի կատարվել են 3,6 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 1,2 մլն դրամի աշխատանքներն ավարտվել են, իսկ 2,4 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Այս ուղղության ***«ԷՔՊ կաթոդային կայանների կառուցում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր 160,1 մլն դրամի կառուցել 32 հատ էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ:

Փաստացի 1,2 մլն դրամի ներկայացվել են 6 հատ ԷՔՊ կայանների վերականգնման նախագծային աշխատանքներ, որոնք կատարվել են նախորդ ժամանակաշրջանում: Նշված նախագծային աշխատանքների՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվելու հարցը կքննարկվի նշված 6 հատ կայանների վերականգնման աշխատանքներն ավարտելուց հետո:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ այս ուղղությամբ ներկայացված 1,2 մլն դրամի ներդրումները ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Այս ուղղության մնացած ենթաուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

«Էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում» ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 19,2 մլն դրամ:

Փաստացի կատարվել են 9,4 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում նույն ծավալի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Այս ենթաուղղության ***«35/6 կվ ենթակայանի սարքավորումների փոխարինում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 11,2 մլն դրամ էլեկտրական սարքավորումների հիմնանորոգման, օդային էլեկտրահաղորդման գծի հենարանների փոխարինման և անջատիչների փոխարինման նպատակով:

Փաստացի ներդրվել 2,7 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

Նշված ենթաուղղությամբ 0,8 մլն դրամ ծավալով ներկայացված է «Տրանսֆորմատորային ենթակայանի 35/6կվx2500+6300 կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորի ախտորոշման ծառայություն» աշխատանքը, որը նախապես համաձայնեցված չէր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Նշված ուղղության ***«ԳԳՄ-ների վարչական շենքերի ջեռուցման և ջերմամատակարարման համակարգերի արդիականացում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 8,0 մլն դրամ՝ ընկերության ԳԳՄ-ների ջերմամատակարարման համակարգերի արդիականացման նպատակով:

Փաստացի կատարվել են 6,7 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջ ծավալով ավարտվել են:

Ստորև՝ աղյուսակ 6-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 7

մլն դրամ

հ/հ	**Ներդրումների ուղղությունը**	**Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը**	**Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված**	**Ընդամենը**
1	Գազաբաշխման համակարգի վերականգնում, փոխարինում, վերատեղադրում	34,6	213,2	247,9
2	ԷՔՊ կայանների կառուցում և արդիականացում	-	1,2	1,2
3	Էներգամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի վերականգնում և արդիականացում	0,8	-	0,8
4	**Ընդամենը**	**35,4**	**214,4**	**249,8**

Գազաբաշխման համակարգին վերակառուցման ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 592,9 մլն դրամի ներդրումներից 249,8 մլն դրամ ենթակա է նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում պետք ներառվի է 343,1 մլն դրամը:

3.2.3. Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Այս նպատակով 2013 թվականին հաշվառման համակարգի արդիականացման, գազաբաշխման համակարգի ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերման, ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման, շենքերի և շինությունների վերականգնման և վերակառուցման, կապի համակարգի ընդլայնման և արդիականացման, և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով նախատեսվում էր իրականացնել 2 586,2 մլն դրամի ներդրումներ:

Փաստացի իրականացվել են 1 358,0 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 1 354,2 մլն դրամի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման, իսկ 3,8 մլն դրամի ներդրումներ մնացել են անավարտ:

2013 թվականին **«Հաշվառման համակարգի արդիականացում»** ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 000,1 մլն դրամ՝ գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչների, մեմբրանային գազահաշվիչների արկղերի, էլեկտրոնային ճշտիչներով համալրված նոր սերնդի գազահաշվիչների (իրենց ծախսաչափային հանգույցներով) ձեռքբերման և տեղադրման, չափիչ հանգույցների ու արդյունաբերական գազահաշվիչ հանգույցների տեղադրման նպատակով և այլն:

Փաստացի իրականացվել են 724,8 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում 724,2 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 0,6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Այս ուղղության ***«Գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչների տեղակայում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ձեռք բերել և տեղադրել 1 000 հատ գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչ՝ 255,0 մլն դրամ ընդհանուր ծավալով:

Փաստացի ներդրվել է 52,7 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Ավարտված ներդրումների ծավալում 0,4 մլն դրամի ներկայացվել է GSA 1-250 հանգույցների տեղակայման ծախսը, որը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

«Էլեկտրոնային ճշտիչներով համալրված նոր սերնդի գազահաշվիչների ձեռքբերում և տեղադրում» ենթաուղղությամբ ընդհանուր՝ 585,0 մլն դրամ ծավալով նախատեսվում էր ձեռք բերել և տեղակայել էլեկտրոնային ճշտիչներով համալրված 450 հատ նոր սերնդի գազահաշվիչներ՝ իրենց չափիչ հանգույցներով:

Փաստացի ներդրվել է 568,2 մլն դրամ 425 հատ գազահաշվիչների ձեռքբերման և տեղակայման ուղղությամբ:

«ք. Արտաշատ, «Արվիկա-Կլասիկ» ԱԳԼՃԿ-ն սնող մ/ճ գազատարի չափիչ հանգույցի տեղադրում (շին-մոնտաժային աշխատանքներ)՝ մեկ չափիչ գծով» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 4,1 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 4,2 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ենթաուղղությամբ 1,1 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում:

«գ. Նորաբաց, «Ճերմակ Երամ» ԱԳԼՃԿ-ն սնող մ/ճ գազատարի չափիչ հանգույցի տեղադրում (շին-մոնտաժային աշխատանքներ)՝ մեկ չափիչ գծով» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 4,4 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 4,5 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ենթաուղղությամբ 1,2 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում:

«Գեղարքունիքի ԳԲԿ - Վ. Արտաշատ մ/ճ գազատարի չափիչ հանգույցի տեղադրում (շին-մոնտաժային աշխատանքներ)՝ երկու չափիչ գծերով» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 6,8 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 8,2 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ենթաուղղությամբ 1,3 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում:

«Զրաշեն» չափիչ հանգույցի տեղադրում (շին-մոնտաժային աշխատանքներ)՝ երկու չափիչ գծերով» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 8,1 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 5,7 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքն ամբողջ ծավալով ավարտվել է:

Այս ենթաուղղությամբ 1,1 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման՝ սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում:

Այս ենթաուղղության մնացած ուղղություններով ներդրումներ չեն իրականացվել:

«Արդյունաբերական գազահաշվիչ հանգույցների տեղադրում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 77,7 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 81,3 մլն դրամ, որի արդյունքում 80,7 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 0,6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Այս ենթաուղղությամբ 0,1 մլն դրամի ներկայացվել են արդյունաբերական գազահաշվիչ հանգույցների վերանորոգման ծախսեր, որոնք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ բնույթով ընթացիկ ծախսեր են և չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրերի տարրեր:

Այս ենթաուղղությամբ ևս 2,8 մլն դրամ ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումների նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

Նշված ուղղության այլ ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 804,5 մլն դրամ՝ ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերման և փոխարինման և տարբեր սարքերի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ներդրվել է 331,6 մլն դրամ, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

Նշված ուղղության ***«Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային կափույրների ձեռքբերում և տեղադրում»*** ենթաուղղությամբ 2013 թվականին 682,0 մլն դրամ ծավալով նախատեսվում էր տեղակայել 31 000 հատ ազդանշանային սարքեր և անջատիչ վթարային կափույրներ:

2013 թվականին նշված ենթաուղղությամբ 324,8 մլն դրամի տեղակայվել են 14 545 հատ սարքեր:

Բացի այդ, նշված ուղղությամբ 1,1 մլն դրամ ծավալով ներկայացվել է նաև ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների տեղադրման ժամանակ օգտագործված գործիքների մաշվածության և 1,1 մլն դրամի՝ այդ գործիքների վերանորոգման և այլ ընթացիկ ծախսեր, որոնք ևս ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ նշված գործիքներն իրենց ձեռքբերման ժամանակ ամբողջ արժեքով արդեն իսկ ներառվել են սակագնի մեջ, իսկ դրանց վերանորոգման հետ կապված ծախսերը բնույթով ընթացիկ են և չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրերի տարրեր:

«Արտահոսքի ցուցասարքերի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր 22,5 մլն դրամի ձեռք բերել 313 հատ սարքեր:

Փաստացի այս ենթաուղղությամբ 6,8 մլն դրամի ձեռք են բերվել և հանձնվել շահագործման 69 հատ սարքեր:

Նշված ենթաուղղության այլ ուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 70,2 մլն դրամ՝ ՊԷ խողովակների եռակցման լաբորատոր սենյակի կահավորման, համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով:

Փաստացի ներդրվել է 125,7 մլն դրամ, որի արդյունքում միևնույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Նշված ուղղության ***«Համակարգչային և կազմակերպչական տեխնիկայի ձեռք բերում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 48,8 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 59,1 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Նշված ենթաուղղությամբ 5,0 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել գույքի ռեեստրի վարման ավտոմատացման համակարգի ծրագիր, որը համաձայնեցված չեր, ուստի ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից և 0,2 մլն դրամի կատարվել են համակարգիչների նորոգման աշխատանքներ, որոնք ևս ենթակա են նվազեցման, քանի որ բնույթով ընթացիկ ծախսեր են և չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրի տարրեր:

Բացի այդ նշված ենթաուղղությամբ 5,0 մլն դրամ ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 20,3 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 66,5 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Ավարտված ներդրումների ծավալում 34,1 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել գազահաշվիչների ստուգաչափման փորձարարական ստենդ, որը համաձայնեցված չէր և ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի այդ, 14,1 մլն դրամի ձեռք են բերվել գործիքներ և այլ սարքավորումներ, որոնք ևս նախապես համաձայնեցված չեն եղել և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Այս ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 341,6 մլն դրամ մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման ուղղությամբ:

Փաստացի ներդրվել է 112,3 մլն դրամ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 102,5 մլն դրամի մեքենա-մեխանիզմներ և ավարտվել են 9,5 մլն դրամի տրանսպորտային միջոցների վերասարքավորման և վերանորոգման աշխատանքներ:

Այս ուղղության ***«Մարդատար մեքենաների ձեռքբերում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր 84,0 մլն դրամ ծավալով ձեռք բերել 7 հատ մարդատար մեքենա:

Փաստացի 84,3 մլն դրամ արժեքով ձեռք են բերվել մեկական Ford Transit Jumbo միկրոավտոբուս (16,0 մլն), Lexus LX 570 (36,5 մլն), Hyundai Santa Fe 2,4 (15,6 մլն) և Toyota Camry 2,5 GAS (16,2 մլն) մարդատար ավտոմեքենաներ: Հաշվի առնելով, որ ներդրումային ծրագրով միավոր մարդատար մեքենաների ձեռքբերման գինը համաձայնեցված էր 12,0 մլն դրամ, իսկ ձեռք բերված մեքենաների միավորի արժեքները գերազանցում են նախապես համաձայնեցված ծավալը՝ այս ուղղությամբ 36,3 մլն դրամ ենթակա է նվազեցման է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված ծավալը գերազանցելու պատճառով:

Բացի այդ, ֆիզիկական անձից 8,1 մլն դրամ ծավալով ձեռք է բերվել 1 հատ Toyota Camry ավտոմեքենա: Նշված ձեռքբերման սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այդ մեքենան 2007 թվականի արտադրության է և, հաշվի առնելով, որ 2007 թվականի արտադրության՝ նշված մակնիշի մեքենաների շուկայական գինը չի գերազանցում 6,5 մլն դրամը՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից այս ենթաուղղությամբ 1,6 մլն դրամը ևս ենթակա է նվազեցման:

«Օպերատիվ մեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ 5,5 մլն դրամ ծավալով նախատեսվում էր ձեռք բերել 1 հատ օպերատիվ թեթև մարդատար մեքենա:

Փաստացի 4,0 մլն դրամով ձեռք է բերվել 1 հատ VAZ -21114 -126 -52 մակնիշի մեքենա:

«Վթարային մեքենաների ձեռքբերում» ենթաուղղությամբ 159,7 մլն դրամ ծավալով նախատեսվում էր ձեռք բերել 10 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաներ:

Փաստացի ձեռք է բերվել 1 հատ ՈՒԱԶ 390902 մակնիշի մեքենա: Նշված մեքենայի ձեռքբերման ենթաուղղությամբ համաձայնեցված էր 5,7 մլն դրամ, առանց ԱԱՀ-ի: Մեքենայի ձեռքբերման գինը ներկայացված է 6.1 մլն դրամ ԱԱՀ-ն ներառյալ: ԱԱՀ-ի գումարը՝1,0 մլն դրամ, ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

«Ավտոմեքենաների վերասարքավորում» ենթաուղղությամբ նախատեսվում էր 7,4 մլն դրամ ծավալով իրականացնել 15 հատ ավտոմեքենաների վերասարքավորում:

Փաստացի 1,5 մլն դրամ ծավալով իրականացվել է 3 հատ մարդատար և բեռնա-մարդատար մեքենաների վերասարքավորում:

Բացի վերը նշվածը՝ այս ուղղությամբ 8,3 մլն դրամ ծավալով (8,0 մլն ավարտված) իրականացվել է մեքենաների վերանորոգում, որը (8,0 մլն) ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ մեքենաների վերանորոգման ծախսերն արդեն ներառված են սակագնի ծախսային հոդվածներում:

Այս ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Շենքերի և շինությունների վերականգնում և վերակառուցում» ուղղությամբ նախատեսում էր ներդնել 259,4 մլն դրամ՝ ընկերության վարչական և արտադրական տարբեր շենքերի ու շինությունների վերանորոգման նպատակով:

Փաստացի ներդրվել է 38,5 մլն դրամ, որի արդյունքում 35,7 մլն դրամի աշխատանքներն ավարտվել են, իսկ 2,8 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Այս ուղղության ***«ԳԳՄ-ների շենքերի և շինությունների վերականգնում, վերակառուցում և արդիականացում»*** ենթաուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 199,4 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 38,4 մլն դրամի, որի արդյունքում 35,7 մլն դրամի աշխատանքներ ավարտվել են, իսկ 2,7 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

Նշված ենթաուղղության «Արմավիրի ԳԳՄ Բաղրամյանի ՏՏ վարչական շենքի վերանորոգում» աշխատանքի սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 1,2 մլն դրամ[2] ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի վերը նշվածը՝ այս ենթաուղղությամբ ներկայացվել է 2 հատ պահակային փայտե տնակներ՝ 0,2 մլն դրամ ծավալով, որոնք ևս ենթակա են նվազեցման

սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

Այս ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

«Կապի համակարգի ընդլայնում և արդիականացում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր ներդնել 40,4 մլն դրամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կորպորատիվ համակարգչային ցանցի և կարգավարական կենտրոնի արդիականացման ու IP հեռախոսակապի անցկացման նպատակով:

Փաստացի իրականացվել է 17,3 մլն դրամի ներդրում, որի արդյունքում աշխատանքներն ամբողջ ծավալով ավարտվել են:

Այս ուղղության ***«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կորպորատիվ համակարգչային ցանցի արդիականացում»*** ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 25,6 մլն դրամ՝ ընկերության կորպորատիվ համակարգչային ցանցի արդիականացման նպատակով:

Փաստացի 8,6 մլն դրամ ծավալով ձեռք են բերվել հիմնական միջոցներ, որոնք ամբողջ ծավալով հանձնվել են շահագործման:

Ավարտված ծավալում 3,8 մլն դրամի ձեռք է բերվել 550 հատ հակավիրուսային ծրագրային ապահովում, որը ենթակա է նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ բնույթով ընթացիկ ծախս է և չի կարող հանդիսանալ ներդրումային ծրագրերի տարր:

«IP հեռախոսակապի անցկացում» ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 2,2 մլն դրամ:

Փաստացի ներդրվել է 8,7 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Համաձայն ընկերության ներկայացված տեղեկատվության և սկզբնական փաստաթղթերի՝ նշված սարքավորումները հավատարմագրային կառավարման են հանձնված այլ ընկերության և չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, ուստի և ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Այս ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել:

«Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում» ուղղությամբ 2013 թվականին նախատեսվում էր իրականացնել 70,1 մլն դրամի ներդրումներ՝ քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով:

Փաստացի ներդրվել է 7,8 մլն դրամ, որի արդյունքում նույն ծավալով հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման:

Ավարտված ներդրումների ծավալից 2,5 մլն դրամի տեղադրվել է անվտանգության համակարգ (0,9 մլն դրամ) և ձեռք են բերվել գեներատորներ, եռակցման ագրեգատներ և այլ սարքավորումներ, որոնք ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:

Ստորև՝ աղյուսակ 7-ում, ներկայացված է գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումների ծավալն ըստ ենթաուղղությունների՝

Աղյուսակ 8

մլն դրամ

h/h	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
1	Հաշվառման համակարգի արդիականացում	0.5	2.8	4.7	8.0
2	ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	2.2	-	-	2.2
3	Համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում	53.4	5.0	-	58.5
4	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	8.0	37.3	1.6	46.9
5	Շենքերի և շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում	0.2	-	1.2	1.4

հ/հ	Ներդրումների ուղղությունը	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցող ներդրումների ծավալը	Ակտերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված	Ընդամենը
6	Կապի համակարգի ընդլայնում և արդիականացում	3.8	-	8.7	12.5
7	Քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում	2.5	-	-	2.5
8	**Ընդամենը**	**70,6**	**44,6**	**16,2**	**131,4**

«Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ» ուղղության մնացած ենթաուղղություններով 2013 թվականին ներդրումներ չեն իրականացվել կամ իրականացված ներդրումները մնացել են անավարտ:

Արդյունքում, այս ուղղությամբ իրականացված 1 354,2 մլն դրամի ներդրումներից 131,4 մլն դրամ ենթակա է նվազեցման և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում պետք է ներառվի 1 222,8 մլն դրամը:

ԲԱԺԻՆ 4.
Իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ապրանքների և աշխատանքների գնման գործընթացի մոնիթորինգ:

Ընկերության կողմից մատակարարներից ձեռք բերված ապրանքների գները ուսումնասիրելիս պարզվել է, որ դրանց արժեքները հիմնականում համապատասխանում են ներկայումս գործող շուկայական գներին, ուստի նշված ուղղությամբ կատարված ներդրումներից նվազեցումներ չեն իրականացվել:

Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանք-ների ընտրանքային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մի շարք աշխատանքների գները գերազանցում են նմանատիպ աշխատանքների շուկայական գները: Գների նշված տարբերությունը հիմնականում հետևանք է այդ աշխատանքներում օգտագործվող որոշ նյութերի և սարքավորումների (մասնավորապես տարբեր տրամաչափերի և ճնշման փականների)՝ շուկայականից բարձր արժեքներով ձեռք բերման և փաստացի կատարված աշխատանքների արժեքի նկատմամբ նախահաշվային տոկոսների կիրառման: Հատկանշական է նաև, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված սարքավորումների և նյութերի նկատմամաբ ևս կապալառուների կողմից կատարողական ակտերում հաշվարկվում են նախահաշվային տոկոսներ, ինչը տնտեսական առումով ողջամիտ չէ և հանգեցնում է աշխատանքի գնի չհիմնավորված աճին: **Արդյունքում՝ 2013 թվականին կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ուղղությամբ ներդրումներից 58,7 մլն դրամը ենթակա է նվազեցման:**

ԲԱԺԻՆ 5.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2013 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 4 150,8 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. ավարտված ներդրումների ընդհանուր ծավալից հաշվետվությամբ ներկայացված 758,2 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով:
2. հաշվի առնելով, որ ընկերության կողմից բնական գազի մատակարարման սակագնի 2013 թվականի մեծության հաշվարկման ժամանակ սակագնի ծախսային հոդվածներում ներառվել է ընկերության աշխատողների փաստացի թվաքանակով հաշվարկված միջին աշխատավարձը, ապա նշված հաշվետվությամբ ներկայացված կապիտալացված աշխատավարձը՝ ավարտված աշխատանքների մասով, 150,3 մլն դրամ ծավալով նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, իսկ անավարտ մնացած աշխատանքների մասով 2013 թվականին կապիտալացված աշխատավարձը՝ 56,5 մլն դրամ ծավալով, ենթակա է նվազեցման այդ աշխատանքների ավարտման ժամանակաշրջանում:
3. ավարտված ներդրումների ընդհանուր ծավալից 449,4 մլն դրամ նվազեցվել է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում: Նվազեցված ներդրումների ծավալում ներառված են նախորդ ժամանակաշրջանից եկած 13,3 մլն դրամի նախագծային աշխատանքներ, ինչպես նաև՝ 182,2 մլն դրամ ծավալով ներկայացվել են նախորդ ժամանակաշրջանից եկած անավարտ աշխատանքներ և նախագծային աշխատանքներ, որոնք շահագործման են հանձնվել 2013 թվականին: Նշված 195,5 մլն դրամի ներդրումների ենթակա են

նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումներից՝ այդ նախագծերին համապատասխան աշխատանքների և նախկինում անավարտ աշխատանքների ավարտը և դրանց արդյունքում ձևավորված հիմնական միջոցները շահագործման հանձնելու փաստը հիմնավորող համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Այս ուղղությամբ նվազեցված ներդրումներում 184,9 մլն դրամ ծավալով ներառված է նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված և այլ ընկերություններին հավատարմագրային կառավարման հանձնված հիմնական միջոցների արժեքը:

4. իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է շուրջ 212,4 մլն դրամով, որը և նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ հետևյալ ենթաուղղություններով.
   - №4 գազահորի ընդլայնում՝ 6,7 մլն դրամ,
   - գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում՝ 160,5 մլն դրամ,
   - հաշվառման համակարգի արդիականացում՝ 2,8 մլն դրամ,
   - համակարգչային, կազմակերպչական տեխնիկայի և գույքի ձեռքբերում՝ 5,0 մլն դրամ,
   - ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում՝ 37,3 մլն դրամ:

5.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

մլն դրամ

1	**2013 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ**	**4 488.4**
2	**2013 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը**	**337.6**
3	**2013 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ**	**4 150.8**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**1 570.2**
4.1	***Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում՝***	**758.2**
4.1.1	Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցման և արդիականացման աշխատանքներ	237.3
4.1.2	Գազափոխադրման համակարգի վերակառուցում	396.5
4.1.3	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	18.3
4.1.4	Գազաբաշխման համակարգի վերակառուցում	35.4
4.1.5	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ	70.6
4.2	***Սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նվազեցված ներդրումներ***	**449.4**
4.3	***Աշխատանքի վճարման գծով ծախսումներ***	**150.3**
4.4	***Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ***	**212.4**
5	***2013 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը***	**2 580.6**

Եզրակացություններ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 53,9%-ով: Ներդրումային ծրագրի միայն մեկ ուղղությամբ՝ գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներն են ընկերության կողմից կատարվել նախատեսվածից 56,8%-ով ավելի ծավալով:

2. 2013 թվականի ընթացքում շահագործման է հանձնվել 1 հատ 150 հազ մ^3 ծավալով գազահոր, որը հնարավորություն է տալիս պահեստավորել լրացուցիչ 20-21 մլն մ^3 գազ: Արդյունքում, այսօր ընկերությունը հնարավորություն ունի, ընդհանուր առմամբ, պահեստավորել 135 մլն մ^3 գազ:

3. Գազամատակարարման ցանցին են միացել 11 944 նոր բաժանորդներ և 14 545 բաժանորդների մոտ տեղադրվել են ազդանշանային սարքեր և ինքնաշխատ վթարային կափույրներ: Արդյունքում գազամատակարարման ցանցին միացված բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 650 495:

4. Ընկերության պատվերով կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների (հումք-նյութերի, սարքավորումների և աշխատանքների) գների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնումների ոչ արդյունավետ կազմակերպման արդյունքում դրանք գերազանցում են համանման աշխատանքների շուկայական արժեքները: Բացի այդ, ընկերության կողմից տրամադրված նյութերի և սարքավորումների վրա կապալառու կազմակերպությունների կողմից կիրառվում են որոշ նախահաշվային տոկոսներ, որոնք ևս նպաստում են աշխատանքների՝ շուկայականից բարձր գնով ձեռք բերման գործընթացին:

5. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 4 150,8 մլն դրամի ներդրումներ, որոնցից 1 570,2 մլն դրամի ներդրումները (ընդհանուրի 35,0%-ը) համարվել են ոչ

արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

6. Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով իրականացվել է նաև սպառողների սպասարկման որակի 2012 և 2013 թվականների ցուցանիշների համեմատական վերլուծություն: Կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2013 թվականին, 2012 թվականի համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում գազամատակարարման համակարգում անջատումների տևողության միջին ցուցանիշը[4] բարելավվել է 34%-ով՝ կազմելով 111,22 րոպե/բաժանորդ, նախկին՝ 326,60 րոպե/բաժանորդ-ի փոխարեն, իսկ գազամատակարարման համակարգում անջատումների հաճախության միջին ցուցանիշը բարելավվել է 50%-ով՝ կազմելով 0,23 անջատում/բաժանորդ, նախկին՝ 0,46 անջատում/բաժանորդ-ի փոխարեն:

Գազամատակարարման համակարգում անջատումների տևողության և հաճախության միջին ցուցանիշների նվազումը կարող է պայմանավորված լինել շահագործման արդյունավետության բարձրացմամբ, քանի որ իրականացված ներդրումների ծավալը չէր կարող հանգեցնել նման բարելավման: Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ 2013 թվականի ընթացքում բոլոր գործոնների համալիր ազդեցությունը հանգեցրել է անջատումների տևողության և հաճախության նվազման:

[4] Վերլուծական տեղեկանքում ներկայացված է վթարների հետևանքով տեղի ունեցած անջատումների միջին տարեկան ցուցանիշների համեմատությունը:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի №459Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի աշխատանքային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի №547Ա որոշումը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2013-2015 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի №426Ա որոշումը «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի ճշգրտված ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Հաշվետվություն - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի №01-21/3807 գրությամբ ներկայացված լրամշակված հաշվետվությունը.

Տեղեկատվություն 1 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2012 թվականի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները (http://psrc.am/am/?nid=381)՝

2012 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգում սպառողների գազամատակարարման ընդհատումների դեպքերի վերաբերյալ տեղեկատվական բազան (ամփոփ տեղեկատվություն)

Տեղեկատվություն 2 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2013 թվականի սպառողների սպասարկման որակի ցուցանիշները (http://psrc.am/am/?nid=381)՝

2013 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգում սպառողների գազամատակարարման ընդհատումների դեպքերի վերաբերյալ տեղեկատվական բազան (ամփոփ տեղեկատվություն)

Տեղեկատվություն 3 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգին միացված բաժանորդների քանակը http://www.gazpromarmenia.am/am/infocenter/news/881

Տեղեկատվություն 4 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ընթացքում գազամատակարարման համակարգին միացված բաժանորդների քանակը http://www.gazpromarmenia.am/am/infocenter/news/881